«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա	Հայրենասիրական արժեհամակարգի ձևավորումը պատմության դասաժամին Հալիձորի ճակատամարտի օրինակով
Առարկա	Պատմություն
Հեղինակ	Աննա Ավետիսյան
Մարզ՝	ք. Երևան
Ուսումնական հաստատություն՝	Մոնթե Մելքոնյանի անվան հ.11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... **Error! Bookmark not defined.**

Գլուխ I 5

Սովորողների զարգացման հիմնախնդիրները դպրոցում 5

Գլուխ II 9

Հայրենասիրական արժեհամակարգի ձևավորումը պատմության դասաժամին Հալիձորի ճակատամարտը թեմայի շուրջ 9

Գլուխ III 13

Հետազոտական ընթացք 13

Եզրակացություն 15

Գրականության Ցանկ 16

Ներածություն

Պատմությունը մեկն է այն առարկաներից, որոնց միջոցով հնարավոր է լինում աշակերտների մեջ սերմանել հայրենասիրական արժեքային համակարգ հասկացությունը: Նրանց մոտ պետք է ձևավորել այնպիսի ապատկերացում կազմել իրենց երկրի պատմության, հաղթանակների և հաղթանակած զիրամանատարների մասին: Աշակերտները պետք է գիտակցեն, որ հենց դպրոցում է ձևավորվելու իրենց արժեքային համակարգը, պետք է վերցնեն ուսուցիչների հնարավոր բոլոր գիտելիքները, վերջիններս էլ իրենց հերթին պետք է աշակերների հետ ճիշտ աշխատեն:

Հասարակական դաստիարակության մեջ իր ուրույն և կարևոր դերն ունի պատմությունը: Սկսած անտիկ շրջանից, պատմությանը դիմել են գրականության և արվեստի գործիչները: Պատմության օրինակներով են ոգեշնչված եղել վերջիններիս ստեղծագործությունները: Ժողովրդի հասարակական հիշողության մեջ ամրագրված անցյալի փորձն ունի բարձրագույն արժեք և կարող է վերածվել իրական քաղաքական ուժի համապատասխան պայմաններում: Պատահական չէ, որ ժողովուրդների կյանքի շրջադարձային փուլերում մեծանում է նրանց հետաքրքրությունը պատմության նկատմամբ: Պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իդեալները, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Պատմության ուսուցման գործընթացում են լուծվում սովորողների կրթական, արժեքային, դաստիարակչական և ընդհանուր զարգացման խնդիրները: Հարկ է նշել, որ արժեհամակարգը մարդու բարոյական, հոգևոր իմացական, գեղագիտական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Ներկայումս աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների հայրենասիրության գիտակցության ձևավորումը

սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ համամարդկային արժեքները նույնպես հաշվի առնելով: Նոր սերնդի արժեհամակարգի ձավորման, կրթության և դաստիարակության գործում կարևոր դերակատարում ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային, հայրենասիրական նկարագիր ունեցող սերունդ: «Դավիթ Բեկ, Հալիձորի ճակատամարտը» թեմայի ուսուցումը և յուրացումը եղել է և մնում է պատմության ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը:

Ուսումնասիրության առարկան և նպատակը:Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել թեմայում արրծարծված հայրենասիրական գաղափարները: Այդ նպատակով հետազոտական հարցը սահմանվել է այսպես՝ Ինչպես դաստիարակել հայրենասեր քաղաքացի:

Հետազոտության խնդիրները. 1. բարձրացնել սովորելու մոտիվացիան, 2. Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելուն միտված քայլեր ձեռնարկել, 3. Նպաստել սովորողի վերլուծական կարողությունների խթանմանը:

Արդիականությունը:Հայոց Պատմություն առարկայի ուսուցման բազմազան նպատակներից է աշակերտներին զինել ազգային-հայրենասիրական արժեքներով: Հենց սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Գլուխ I

Սովորողների զարգացման հիմնախնդիրները դպրոցում

Յուրաքանչյուր ժողովրդի անցած ուղին պատկերված է լինում պատմության էջերում: Պատմությունը հանդիսանում է նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսումնասիրումը յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության հիմք է հանդիսանում:

Մարդկության զարգացման նայժմյան փուլում, նման սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, աննախադեպ իրողությունների շրջանում, սովորողների արժեհամակարգի ձևավորման, պահպանման և ամրակայման հիմնախնդիրները օրակարգային են դառնում:

Արժեհամակարգն ինքնին անցյալի փորձի կուտակումն է, որը յուրացնելով աշակերտներն իրենց մեջ կձևավորեն հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, հայրենանվեր գործունեության հպարտության զգացում:

Անշուշտ աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Վերջինս հանդիսանում է օբյեկտիվ օրինաչափություն, քանի որ աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, և հենց այս պատճառով էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է հանդիսանում բուն գործընթացի բովանդակությունը, քանի որ ընտրելով դաստիարակաչական առումով հիմնական գաղափարները, հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում պատմության առարկայի ծրագրի

յուրացման միջոցով աշակերտի մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք[1]:

Հանրակրթության մեջ սովորողների անձի արժեքների ձևավորման առումով իր ուրույն տեղն ու դերն ունի ուսուցանվող պատմություն առարկան, որը հնարավորություն է տալիս աշակերտների իմացական գործունեությունը կազմակերպել՝ ապահովելով վերջիններիս հասարակական գիտակցության զարգացումը, ձևավորել աշակերտների արժեքային կողմնորոշումները՝ հնարավորություն տալով պակերացում կազմել քաղաքակրթության առանձնահատկությունների, հայ մշակույթի մասին, ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, հայրենասիրություն սերմանել նրանց մեջ, հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն ներշնչել:

Հետևաբար հանրակրթական դպրոցում Պատմություն առարկայի դասավանդումը դուրս է գալիս սոսկ ուսուցանելու նեղ շրջանակից՝ վերածվելով սովորողների բարոյական, քաղաքական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որը հարստացնում է սովորողների հոգևոր պաշարները և կոփում գեղագիտական ճաշակը, ինչը կարևոր նշանակություն ունի նրանց արժեհամակարգի ամբողջության և ընդգրկունության առումով: Անցյալի փորձը ուսումնասիրելով՝ մենք իմաստավորում ենք ներկան և կանխատեսում ենք ապագան: Հետևաբար, հասկանալի է դառնում, որ պատմական գիտելիքներն ավելի ակտիվ թափանցելով հասարակական կյանքի մեջ, ընդլայնվում են դրանց գործունեության ոլորտները, հետազոտության օբյեկտները[2]:

Անհերքելի է, որ մարդկանց հետաքրքրությունն իրենց անցյալի նկատմամբ պայմանավորված չէ սոսկ դրա հասարակական ազդակներով: Պատմության նկատմամբ հետաքրքրությունը կարող է պայմանավորված լինել նաև գիտականության պահանջով, անցյալի իրողությունները ճանաչելու ձգտմամբ, ճշմարտության բացահայտման մղումով:

---

[1] Փարեմուզյան Ի., «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում», էջ 397:
[2] Ղուկասյան Ա., «Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում», 2013, էջ 9:

Հայոց պատմությունը համաշխարհային պատմության մի օղակն է կազմում ։ Հետևաբար այն պետք է ուսումնասիրվի ընհանուր պատմության հետ մեկտեղ։ Այդ միասնությունը կարելի է ապահովել հետևյալ կերպ.

1. Նույն դարաշրջանի պատմական դեպքերի ու երևույթների համաժամանակյա ուսուցմամբ,

2. Ընդհանուր պատմական հասկացությունների և գաղափարական յուրացման միջոցով,

3. Ներառարկայական կապերի մշատական իրականացման միջոցով։

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ է ձևավորվում պետականամետ մտածելակերպ ունեցող, հայոց ազգային և համամարդկային արժեքային համակարգը կրող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, ազգային դիմագիծ ունեցող, պատասխանատու քաղաքացի։

Առարկայի ծրագրի շրջանակներում են սովորողները ծանոթանում հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին: Պատմության իմացությունը ձևավորում է ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ[3]։

Պատմական երկու դասընթացների կապն ու հիմնական գծերը համեմատելիս աշակերտները ձեռք են բերում գիտելիքների ամբողջական համակարգ։

՝ Հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները՝ ամեն դասի ժամանակ տվյալ առարկայի ուսուցիչը առարկայական ծրագրերում ներկայացված որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում,

[3] Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը», 2004, N1/2, էջ 10:

առանձնացնում է առանձին աշակերտների մոտ հաճախակի դրսևորվող ընդհանուր դաստիրակչական խնդիրները։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, դասղեկական ժամ, խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը[4]։

Հետևաբար նման արյեքներ տալու համար ուսուցիչները պետք է տիրապետեն մասնագիտական և մարդկային էթիկայի նորմերին, պատասխանատու լինեն աշակերտների կյանքի, վարքի, հոգեկան առողջության ու անձնային աճի համար, արժանապատվորեն կրեն այդ պատասխանատվությունը և պատրաստ լինեն իրենց սաների հետ համագործակցության։

«Գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն ուսուցչի կերպարը անտարբերության, ձանձրույթի, բարոյական չկողմնորոշվածության, անհեռանկար երեխայի ձևավորան է հանգեցնում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»[5]։

Այսպիսով, ամփոփելով աշխատանքի առաջին մասը, կարող ենք հստակ ասել, որ ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Ուստի յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցմամբ, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, բնավորության, զգացմունքների, կամքի, հոգեբանական տարբեր դրսևորումների, միաժամանակյա և փոխկապակցված մոտեցմամբ։ Ի վերջո հենց կրթության միջոցով է, որ ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին։

[4] Бабанский Ю. К., “Функции осуществления комплексного подхода к воспитанию”, Москва, 1983, с. 111.
[5] Кон И. С., “Психология старшекласника”, Москва, 1980, с. 132.

Գլուխ II

Հայրենասիրական արժեհամակարգի ձևավորումը պատմության դասաժամին Հալիձորի ճակատամարտը թեմայի շուրջ

Հետազոտության այս հատվածում փորձել ենք հասկանալ թե ինչպե՞ս է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին: Ի վերջո հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու, ձևավորելու ու պահպանելու հայրենասիրության ասարժեքները: Հայոց պատմությունն ինքնին դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն պահպանող առարկա է: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա սովորողներին ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս պատկերացում կազմել հայրենասիրական գաղափարի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Պատմություն առարկայի ծրագրի կազմման հիմքում հիմնականում գծային մոդելն է դրվում, որտեղ ժամանակագրական հաջորդականության սկզբունքն է պահպանված: Ծրագրի կազմման հիմքում հիմնականում շեշտը դրվում է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրության՝ դրանց պատճառահետևանքային կապերի բացահայտման և քննադատական վերլուծության մեթոդի վրա: Այսօր աշակերտակենտրոն ուսուցումը կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկն է դարձել , անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգի (գիտելիքների, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները[6]:

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում

[6] Ступина С. Б., Технологии интерактивного обучения в высшей школе, Саратов, 2009. с. 28.

ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ[7]: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Անգամ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

«Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության»; Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի:

Պատմության ուսուցման գործընթացում, դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարաբնույթ դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն:

[7] Primoratz Igor , Zalta Edward N., ed.: The Stanford Encyclopedia of Philosophy: Metaphysics Research Lab, Stanford University, 2019.

Մատուցվող թեմայի բովանդակությունից և ինչ-որ չափով սովորողի անձնային առանձնահատկություններից կախված ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները, ուսուցման մոդելները, որոնք օգտագործվում են դասավանդման մեջ, ներառում են ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները խթանող ուսումնական գործընթացը: Որպեսզի տվյալ մեթոդը արդյունավետ լինի, այն պետք է սերտորեն առնչվի սովորողի տարիքային առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:

Բնականաբար, ամեն դասի ժամանակ ուսուցիչը մեթոդի ընտրություն է կատարում: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դասի ժամանակ, կամ դասի որոշակի փուլում լուծվող դիդակտիտակական խնդիրները: Բացի դասի նպատակից և խնդիրներից մեթոդի ընտրությունը, կախված է նաև դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, պատրաստվածության մակարդակից, հետաքրքրությունից, ժամաքանակից և այլ գործոններից[8]:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային-հայրենասիրական արժեքներով[9]:

Օրինակ՝ Դավիթ Բեկը և Հալիձորի Ճակատամարտը թեմայի շուրջ բացի կերպարային և ռազմական գործողությունների քննարրկումներից առավել նպատակահարմար է նաև համանուն ֆիլմի դիտումը, ինչն աշակերտներիհն հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ և ընալել կերպարը:

Այնուհետև ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները: Օրինակ թեմայի շրջանակներում ներկայացնել Հալիձորի ճակատամարտը, ներկայացնել Դավիթ Բեկի կերպարը, աշակերտներին ծանոթացնել նրա սխրանքների, քաջագործություններին, օրինակ թե ինչպես է նա մեծ եռանդով

[8] Котова С. А., Педагогика начального образования. /Учебник для вузов /Под ред. С.А.Котовой. – СПб Питер, 2017. с. 226.
[9] Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 123

ձեռնամուխ եղել հայկական զինված ուժերի կազմակերպմանը, ամրությունների կառուցմանը, նյութական ու ռազմական կայուն հենարան ստեղծելու գործին, այցելել Հալիձոր, Տաթևի վանական համալիր, որպեսզի ավելի լավ պատկերացում կազմեն տվյալ տեղանքի մասին:

Խնդրո թեման արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հիանալի հնարավորություններ է ընձեռում: «Դավիթ Բեկ, Հալիձորի ճակատամարտը» թեմայի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր մարմնավորումն է ստացել Դավիթ Բեկի կերպարում: Բեկն իր մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ , միաժամանակ պայքարող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն է և բնութագրվում է հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ:

Դավիթ Բեկը առաջին հարվածներն ուղղեց Սյունիք թափանցած քոչվոր ցեղերի դեմ: Սկզբնական շրջանում նա հանկարծակի հարձակումներով պարտության մատնեց թշնամիների ցիրուցան ուժերը, ահաբեկեց, խլեց իրեն դիմադրող հայ մելիքների և մուսուլման ցեղապետների կալվածները ու նվիրեց իր զորապետներին: Այնուհետև Դավիթ Բեկի զորքը հաջող մարտեր մղեց Օրդուբադի, Նախիջևանի և Բարգուշատի խաների, Ղափանի ֆեոդալների դեմ, գրավեց Սյունիքի բոլոր կարևոր կետերն ու բնակավայրերը[10]:

[10] Կնյազյան Հ., Ազատագրական պայքարը Դավիթ բեկի գլխավորությամբ, Երևան, 1963:

Գլուխ III

Հետազոտական ընթացք

Հետազոտական մասի համար որոշել եմ կազմակերպել բաց դաս, որի ընթացքում աշակերտները քննարկել և վերլուծել են դասի թեման հիմնային արժեքներով:

«Դավիթ Բեկը և Հալիձորի ճակատամարտը» թեմայի շուրջ քննարկում ենք անց կացրել, որտեղեմ մի քանի մեթոդներ: Դասի սկզբնամասում կիրառել եմ շրջված դասարան մեթոդը, որն աշակերտներին հնարավորություն տվեց ծանոթացալ տվյալ պատմական կերպարներին և այն ժամանակաշրջանին, որում նրանք ապրել և գործել են՝ նախապես դիտելով Դավիթ Բեկ ֆիլմը և կարդալով Ռաֆֆու «Մխիթար Սպարապետ» և «Դավիթ Բեկ» վեպերը:

Խմբային աշխատանքի միջոցով դասի ընթացքում աշակերտների հետ միասին պատրաստեցինք սահիկաշար, որում հիմնավոր կերպով ներկայացվեց դասի առանցքային կերպարների դրդապատճառները՝ դրանցից բխող գործողությունները: Այնուհետև քննարկեցինք կերպարների գործողությունները, աշակերտները իրենց կարծիքները սկսեցին հայտնել կերպարներից նրանց ստացած տպավորություններից, քննարկեցինք բնաև ֆիլմը և վեպերը, զուգահեռներ տարանք նմանությունների և տարբերությունների մասին, և այն մասին, թե ինչպիսին են նրանք իրենց երևակայության մեջ:

Հաջորդ մեթոդը բանավեճի մեթոդն է, որի կիրարմամբ, հիմք ընդունելով դասի թեման, քննարկեցինք և վերլուծեցինք հայրենասիրություն, հայրենիքի հանդեպ հավատարմության արժեքների համադրումը և հակադրումը:

Յուրաքանչյուր աշակերտի համար խաղի մեջ ձեռք բերված գիտելիքները զգայական, զգացմունքային են դառնում: Այս զգացմունքները օգնում են նրանց ավելի խորը հասկանալու, ավելի լավ զգալու ուսումնասիրած դարաշրջանը և պատմական նշանավոր դեմքերին:

Այս դասն առանձնանում էր մյուսներից իր ամբողջականությամբ, դասի փուլերի ներքին փոխկապվածությամբ, ուսուցիչ-աշակերտ համատեղ

գործունեությամբ։ Դասի ընթացքում կիրառվեց նաև զուգահեռներ անցկացրեցինք միջառարկայական կապերի միջև, այլ առարկաներից, օրինակ հայոց եկեղեցու պատմություն առարկայից ստացած գիտելիքների օգտագործումը հնարավորություն տվեց աշակերտների մոտ զարգացնել կրթական, դաստիարակչական և արժեքային համակարգի աստիճանը, ձևավորել հայրենակենտրոն արժեհամակարգ, զուգահեռաբար պատմական օրինակների վրա հենվելով աշակերտների մոտ ձևավորել հավասարություն, մարդասիրություն, հասկանալ աշակերտների իմացական աշխարհընկալման աստիճանը։

Դասի ավարտից հետո աշակերտները վերլուծություններ և եզրակացություններ արեցին, քննարկման միջոցով նրանք դասից դուրս բերեցին և ընդգծեցին դասին առնչվող հիմնական և կարևոր արժեքները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած ուսումնական բնագավառ, որ ուսուցանվում է հանրակրթական դպրոցում որոշակի մասնաբաժին ունի սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Մասնավորապես պատմություն առարկայի արժեհամակարգի բաղադրիչներում առկա են հայրենասիրական, ազգագրական, համամարդկային, քրիստոնեական և այլ արժեքներ, հետևաբար կարի անհրաժեշտ է բացահայտել այն բոլոր ճիշտ մեխանիզմներն ու ուղիները, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար:

Որպեսզի յուրաքանչյուր սովորողի համար պատմություն առարկան անձնային նշանակություն ստանա, կարևոր է դասի ընթացքում ստեղծել ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսել յուրաքանչյուր նախաձեռնություն, իմացական ցանկացած գործընթաց, յուրաքանչյուր իմացական փորձ:

Քաղաքացիական գիտելիքներից ու որակներից բացի շատ ստեղծագործություններ սովորողին հնարավորություն են տալիս արժեքային այնպիսի որակներ մշակել, ինչպիսիք են՝ մարդասիրությունը, գթասրտությունը, հանդուրժողականությունը, հարգանքը ուրիշների հանդեպ, և որ ամենակարոնրն է հայրենասիրությունը:

Յուրաքանչյուր անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչը արժեքային կողմնորոշումն է հանդիսանում: Անհատը հասուն է դառնում միայն զարգացած արժեքային կողմնորոշման շնորհիվ:

Այսպիսով, ամփոփելով, հստակ կարող ենք ասել, որ պատմության առարկայի դասավանդումը զարգացնում է աշակերտների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները, նպաստում է պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու, մարդասիրության, հայրենասիրության ոգով տոգորված անհատի արժեքային համակարգի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կնյազյան Հ., Ազատագրական պայքարը Դավիթ բեկի գլխավորությամբ, Երևան, 1963:
2. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:
3. Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը», 2004, N1/2:
4. Փարեմուզյան Ի., «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:
5. Бабанский Ю. К., “Функции осуществления комплексного подхода к воспитанию”, Москва, 1983:
6. Кон И. С., “Психология старшекласника”, Москва, 1980:
7. Котова С. А., Педагогика начального образования. /Учебник для вузов /Под ред. С.А.Котовой. – СПб Питер, 2017:
8. Ступина С. Б., Технологии интерактивного обучения в высшей школе, Саратов, 2009:
9. Primoratz Igor , Zalta Edward N., ed.: The Stanford Encyclopedia of Philosophy: Metaphysics Research Lab, Stanford University, 2019: